



Ծովուն արկորստութիւնքը :

Ո՛վ ծով, որ այնչափ անգին կեանքեր ընկղմեր ես ծոցիդ մէջ, ինչպիսի անուամբ կոչենք զքեզ: Անգութ աւունը բաւական չէ. երբոր երկնքի պէս վճիտ ու խաղաղ մկանամբք կը հրաւիրես սպիտակ առագաստները՝ ետքն անոնց կողերն աղամանդեայ բազուկներով հարուածելու համար, չես արժանի նենգաւոր անուան:

Անթուելի են ծովուն ջրին կաթիլքը, անթուելի և իր լսած ամէնազգի հեծութիւնքն և ցաւք: Թերեւս այնչափ ճոխ գերեզմաննոց է ծովուն անդունդը, որչափ երկրիս ամէն խորշից վրայ տարածուած մահուան քնարանները. և սրտագին մայր մը կամ հայր կամ եղբայր չկրնար սիրոյ մահարձան մը տնկել ջրին մէջ իր սիրելոյն թաղուած տեղւոյն վրայ: Չգիտէր անգութն ու նենգաւորը որ վշտագնեւոց սիրտը ցաւոցն առարկայովը կը սնանի ու կը պաղըջտըկի. իսկ ինք իր աւարներուն հետքը չթողուր: Գոնէ քամիները կարենային նաւարեկեւոց վերջին ձայներն՝ յետին աւանդներն ինչուան ցաւաւ հասցնելու:

Քանի որ եղբրքէդ ծիծաղերես ծրփծրփալդ կը տեսնեմ, ո՛վ տարրահաւոր, կը զուարթանայ սիրտս, ներսս կ'ոգելորի և իբրեւ բարեկամի կը տարածեմ բազուկներս: Սակայն երբ կը հեծ-

նեմ վրադ, կը դողամ խրոխտ և անսանձ երիվարէդ. առջեւ բացուած կը նշմարեմ բիւրաւոր բերաններդ ու գրբոցդ խորութիւնը կը չափեմ: Անպատին գազանաց պէս մռնչելու ատենդ՝ կը յիշեմ որ քեզի տիրելու համար ստեղծուած չեմ. անոր համար չեմ ուզեր կառակել խնտալ խաղալ հետդ: Քու ալեացդ ձայնը ցածցրնողն Արարիչդ ինքնին է. իրեն է այս անսուտ պատգամը:

Ո՛հ թէ գիտնար անզգայն՝ մէկ վայրկենի մէջ մարդկութեան հասուցած աղէտները. ինչպիսի թարմ, ինչպիսի վայելքի համը դեռ չառած հասակներ, ինչ լեցուն յոյսեր, ո՞րքան սիրազեղ սրտեր՝ ձրի զոհ են եղեր. և ինչ օգուտ է անոնց ազգականաց ու սիրելեաց ապրիլը: Բայց սպիտակացեալ գլուխներուն ալ կը նախանձի ծովը. չթողուր որ ինքիրեն խոնարհին 'ի հող՝ ուստի առեալ են. իր արկորստութիւնը ամէն հասակ ախորժահամ կը գտնայ: Ձայն չունին իր բիւրուց բիւր յափշտակածները՝ որ կարենան բողբել երկնից և երկրի. և եթէ ունենային իսկ, իր վայրենի գոչիւնները կը ծածկէին զայն:

Հազար էջ չբաւէր ծովուն արկորստութիւնները պատմելու. Աստուած գերեզմաննիս անկէ հեռու դնէ: